ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 782 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 1023-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի սեպտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական բյուջեի կատարման աշխատանքները համակարգող խորհուրդ ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» N 1023-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) որոշման, ինչպես նաև NN 1 և 2 հավելվածների վերնագրերը «ՀԱՄԱԿԱՐԳՈՂ» բառից հետո լրացնել «ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ» բառերով.

2) որոշման 1-3-րդ կետերը, N 2 հավելվածի 1-ին կետը «համակարգող» բառից հետո լրացնել «և հարկաբյուջետային ռիսկերի կառավարման» բառերով.

3) N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով՝

«2.1. Հարկաբյուջետային ռիսկերի կառավարմանը վերաբերող նիստերին խորհրդի կազմում ընդգրկվում են նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարը, ՀՀ ներքին գործերի նախարարը և ՀՀ արդարադատության նախարարը:».

4) N 1 հավելվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Խորհրդի աշխատանքներին մասնակցելու նպատակով, ըստ անհրաժեշտության, կարող են հրավիրվել նաև այլ շահագրգիռ պետական մարմինների ղեկավարները:».

5) N 2 հավելվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Խորհրդի հիմնական նպատակներն են՝

1) պետական բյուջեի կատարման գործընթացում աշխատանքների համակարգում, բյուջեի վերանայման գծով առաջարկությունների ներկայացում և աշխատանքների նկատմամբ մշտադիտարկման իրականացում.

2) Հայաստանի Հանրապետության պետական ֆինանսների կայունության ու կանխատեսելիության ապահովում՝ հարկաբյուջետային ռիսկերի բացահայտման, գնահատման և համակարգված կառավարման ուղղությունների ու քաղաքականությունների սահմանման և ներգրավված պետական մարմինների աշխատանքների համակարգման միջոցով:».

6) N 2 հավելվածի 3-րդ կետում՝

ա. «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթակետով՝

«3) հարկաբյուջետային ռիսկերին վերաբերող վերլուծությունների և պետական մարմինների կողմից արձագանքների համակարգումը:».

7) N 2 հավելվածի 4-րդ կետում՝

ա. «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-6-րդ ենթակետերով՝

«4) հարկաբյուջետային ռիսկերին առնչվող հիմնական փաստաթղթերի (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության տարեկան բյուջետային ուղերձի, հարկաբյուջետային ռիսկերի զեկույցի և հարկաբյուջետային ռիսկերի մեղմման հաշվետվության) նախագծերի քննարկում.

5) պետական մարմինների կողմից իրականացվող՝ հարկաբյուջետային ռիսկերի կառավարմանն առնչվող միջոցառումների համակարգում՝ վաղ հայտնաբերման, արձագանքման և մեղմման նպատակով.

6) հարկաբյուջետային ճգնաժամային իրավիճակների դեպքում (այդ թվում՝ արտակարգ իրավիճակներ) արտահերթ նիստերի կազմակերպման միջոցով իրավիճակային վերլուծություն և անհետաձգելի հակազդման միջոցառումների քննարկում:».

8) N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին կետով՝

«4.1. Հարկաբյուջետային ռիսկերի կառավարման գործառույթների հետ կապված խորհրդին աջակցություն և խորհրդատվություն տրամադրելու նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հրամանով ստեղծվում է աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի գործառույթներն են կառավարել հարկաբյուջետային ռիսկերին առնչվող տեղեկատվության հավաքագրման, փոխանակման և վերլուծության մեխանիզմները՝ հարկաբյուջետային ռիսկերի համակարգված վերհանման և մեղմման նպատակով: Աշխատանքային խմբի կազմը, գործառույթները և աշխատակարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հրամանով:».

9) N 2 հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետը «ռիսկերի» բառից առաջ լրացնել «հարկաբյուջետային» բառով.

10) N 2 հավելվածի 8-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին ենթակետով՝

«3.1) խորհրդին տարեկան պարբերականությամբ հարկաբյուջետային ռիսկերի զեկույցի և ռիսկերի մեղմման հաշվետվության ներկայացումը և ըստ անհրաժեշտության՝ մոնիտորինգի արդյունքներով հայտնաբերված ռիսկերի պրոֆիլի փոփոխությունների վերաբերյալ հաշվետվողականության ապահովումը.»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

05.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ